

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Քրեական դատավարության և  
կրիմինալիստիկայի ամբիոն

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ 1902/B08 «Հայաստանի Հանրապետության արդարադատության  
համակարգը»

Որակավորման

աստիճան՝

բակալավրի կրթական ծրագիր

Կազմեցին՝

իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա. Հարությունյանը

իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Յ. Ղուկասյանը

ԵՊՀ հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ 2013

## **ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1902/B08 «Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգը» (5 կրեդիտ)  
Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 24 ժամ սեմինար, 86 ժամ ինքնուրույն աշխատանք)

1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

### **Դասընթացի նպատակը**

Դասընթացի նպատակն է ուսանողներին սկզբնական, ելակետային գիտելիքներ տալ Հայաստանի Հանրապետության դատական իշխանության և դատական համակարգի կազմակերպման և գործունեության, ինչպես նաև արդարադատության իրականացման հետ առնչվող այլ կառույցների մասին:

### **Կրթական վերջնարդյունքները**

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը

Կունենա գիտելիք և իմացություն

- ✓ դատական իշխանությունից և դատական համակարգից,
- ✓ արդարադատության իրականացման հիմնարար սկզբունքներից,
- ✓ արդարադատության համակարգը կազմող կառույցների գործունեությունից:

Ունակ կլինի (բուն մասնագիտական կարողություններ)

- ✓ քննարկումներ և բանավեճեր անցկացնելու առաջադրվող խնդիրների շուրջ,
- ✓ վեր հանելու դատարանակազմական օրենսդրության մեջ առկա և իրավակիրառ պրակտիկայում ծագող խնդիրները ու դրանց տալ լուծումներ,
- ✓ վերլուծելու իրավակիրառ պրակտիկայում դատարանների և արդարադատության համակարգի մյուս մարմինների գործունեությունը:

### **Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները**

Նախատեսված է 2 ընթացիկ գրավոր ստուգում, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 4 միավոր: Ստուգման ընթացքում յուրաքանչյուր ուսանողի տրվում է 1 խնդիր՝ 4 միավոր առավելագույն արժեքով, որը գործնական ուղղվածություն ունեցող իրավիճակ է: Միավորների քայլը 0.5 է: Խնդրի լուծումը ենթադրում է իրավիճակում առկա և օրենքին հակասող փաստերի բացահայտում և դրա հիմնավորում՝ փաստական

հանգամանքների և դատարանակազմական օրենսդրության վերլուծության հիման վրա: Առավելագույն միավորին կարող է հավակնել իրավիճակում առկա և օրենքին հակասող բոլոր փաստերը բացահայտած և դրանք հստակ, անհրաժեշտ ու բավարար նյութի շարադրմամբ հիմնավորած ուսանողը: Օրենքին հակասող փաստերի արձանագրումն առանց հիմնավորման գնահատվում է 0 միավոր: Իրավիճակում տեղ գտած և օրենքին չհակասող փաստը որպես սխալ ներկայացնելու դեպքում ուսանողը կարող է հավակնել միավոր ստանալու, եթե փորձել է հիմնավորել այն: Այդ դեպքում միավորի արժեքը կախված է հիմնավորման խորությունից, հիմնավորման մեջ դատարանակազմական օրենսդրության իմացությունն արտացոլելու աստիճանից (նշված դեպքերում ուսանողը կարող է առավելագույնը հավակնել 1 միավորի):

Առաջին ընթացիկ գրավոր ստուգումը ներառում է 1-6 թեմաները, իսկ երկրորդ ընթացիկ գրավոր ստուգումը՝ 7-11 թեմաները:

**Եզրափակիչ քննություն:** Բանավոր հարցում: Ստուգման ընթացքում յուրաքանչյուր ուսանողի տրվում է հարցատոմս, որը պարունակում է 4 տեսական հարց՝ յուրաքանչյուրը 2,5 միավոր արժեքով: Միավորների քայլը 0,5 է:

# ՂԱՍԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՄԱ 1

### «Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգը» դասընթացի ընդհանուր բնութագիրը (2 ժամ դասախոսություն)

1. «Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգը» դասընթացի առարկան և համակարգը: 2. «Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգը» դասընթացի աղբյուրները:

**Հարցեր 1-2** – Անցկացվում է ներածական դասախոսություն, ուսանողներին ներկայացվում են դասընթացի բովանդակությունը, նպատակը և իրավական հիմքերը:  
**Հարցեր 1-2** – Ինքնուրույն աշխատանք - ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը և իրավական ակտերին:

## ԹԵՄԱ 2

### Դատական իշխանությունը Հայաստանի Հանրապետությունում (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Դատական իշխանության հասկացությունը և հատկանիշները: 2. Դատական իշխանության դերը և նշանակությունը իշխանությունների սահմանադրական համակարգում: 3. Դատարանը որպես դատական իշխանության մարմին:

**Հարցեր 1-3** – Անցկացվում է դասախոսություն քննարկման եղանակով:  
**Հարցեր 1-3** – Ինքնուրույն աշխատանք - ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը և իրավական ակտերին:  
**Հարցեր 1-2** – Սեմինար պարապմունք – իրավիճակների վերլուծություն, խնդրահարույց հարցերի քննարկում:

## ԹԵՄԱ 3

### Դատական իշխանության անկախությունն ու ինքնակառավարումն ապահովող մարմինները (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Արդարադատության խորհրդի կարգավիճակը, կազմը և լիազորությունները, 2. Դատական իշխանության ինքնակառավարման մարմինները, 3. Դատական դեպարտամենտի իրավասությունները և կառուցվածքը:

**Հարցեր 1-3** – Անցկացվում է դասախոսություն վիզուալ նյութերի (սլայդների) կիրառմամբ:  
**Հարցեր 1-3** – Ինքնուրույն աշխատանք - ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը և իրավական ակտերին:  
**Հարցեր 1-2** – Սեմինար պարապմունք – իրավիճակների վերլուծություն, խնդրահարույց հարցերի քննարկում:

## **ԹԵՄԱ 4**

### **Դատավորի կարգավիճակը**

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Դատավորի կարգավիճակի ընդհանուր բնութագիրը: 2. Դատավորի թեկնածուին ներկայացվող պահանջները և դատավորի նշանակման ընթացակարգը: 3.

Դատավորի վարքագծի կանոնները:

**Չարդեր 1-3** – Անցկացվում է դասախոսություն քննարկման եղանակով:

**Չարդեր 1-3** – Ինքնուրույն աշխատանք - ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը և իրավական ակտերին:

**Չարդեր 2-3** – Սեմինար պարապմունք – իրավիճակների վերլուծություն, խնդրահարույց հարցերի քննարկում:

## **ԹԵՄԱ 5**

### **Դատավորի անկախության երաշխիքները**

(6 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար)

1. Դատավորի անկախության երաշխիքների հասկացությունը և նշանակությունը: 2. Դատավորի անկախության առանձին երաշխիքները: 3. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և ընթացակարգը: 4. Դատավորի լիազորությունների դադարեցման հիմքերը և ընթացակարգը

**Չարդեր 1-4** – Անցկացվում է դասախոսություն վիզուալ նյութերի (սլայդների) կիրառմամբ:

**Չարդեր 1-4** – Ինքնուրույն աշխատանք - ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը և իրավական ակտերին:

**Չարդեր 2-4** – Սեմինար պարապմունք – իրավիճակների վերլուծություն, խնդրահարույց հարցերի քննարկում:

## **ԹԵՄԱ 6**

### **Արդարադատության իրականացման սկզբունքները**

(6 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար)

1. Արդարադատության հասկացությունը և բնութագրական հատկանիշները: 2. Դատական իշխանության, արդարադատության և դատավարության հարաբերակցությունը: 3. Արդարադատության իրականացման սկզբունքների հասկացությունը և հատկանիշները: 4. Արդարադատության իրականացման առանձին սկզբունքները:

**Չարդեր 1-4** – Անցկացվում է դասախոսություն վիզուալ նյութերի (սլայդների) կիրառմամբ:

**Չարդեր 1-4** – Ինքնուրույն աշխատանք - ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը և իրավական ակտերին:

**Չարդեր 3-4** – Սեմինար պարապմունք – իրավիճակների վերլուծություն, խնդրահարույց հարցերի քննարկում:

## ԹԵՄԱ 7

### ՀՀ դատական համակարգը

(6 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Դատական համակարգի ձևավորման սկզբունքները: 2. ՀՀ դատական համակարգի հասկացությունը և հատկանիշները: 3. Առաջին ատյանի դատարաններ: 4. Վերաքննիչ դատարաններ: 5. ՀՀ վճռաբեկ դատարան:

**Հարցեր 1-5** Անցկացվում է դասախոսություն վիզուալ նյութերի (սլայդների) կիրառմամբ:

**Հարցեր 1-5** Ինքնուրույն աշխատանք - ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը և իրավական ակտերին:

**Հարցեր 3-5** Սեմինար պարապմունք – իրավիճակների վերլուծություն, խնդրահարույց հարցերի քննարկում:

## ԹԵՄԱ 8

### ՀՀ սահմանադրական դատարանը

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. ՀՀ սահմանադրական դատարանի տեղը դատական համակարգում: 2. ՀՀ սահմանադրական դատարանի կազմակերպման և գործունեության սկզբունքները: 3. ՀՀ սահմանադրական դատարանի կազմը և անդամների կարգավիճակը: 4. ՀՀ սահմանադրական դատարանի լիազորությունները: 5. Դիմումի քննության կարգը սահմանադրական դատարանում:

**Հարցեր 1-5** – Անցկացվում է դասախոսություն քննարկման եղանակով:

**Հարցեր 1-5** - Ինքնուրույն աշխատանք - ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը և իրավական ակտերին:

**Հարցեր 2, 4, 5** - Սեմինար պարապմունք – իրավիճակների վերլուծություն, խնդրահարույց հարցերի քննարկում:

## ԹԵՄԱ 9

### Փաստաբանությունը ՀՀ-ում

(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Փաստաբանության հասկացությունը, նշանակությունը և խնդիրները: 2. Փաստաբանության կազմակերպման և գործունեության սկզբունքները: 3. Փաստաբանների պալատը և դրա մարմինների իրավական վիճակը: 4. Փաստաբանական գործունեության հասկացությունը, ուղղությունները և արտոնագրումը: 5. Փաստաբանի իրավական վիճակը: 6. Հանրային պաշտպանի գրասենյակը:

**Հարցեր 1-6** – Անցկացվում է դասախոսություն քննարկման եղանակով:

**Հարցեր 1-6** - Ինքնուրույն աշխատանք - ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը և իրավական ակտերին:

**Հարցեր 2, 4, 5** - Սեմինար պարապմունք – իրավիճակների վերլուծություն, խնդրահարույց հարցերի քննարկում:

## ԹԵՄԱ 10

### ՀՀ դատախազությունը

(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. ՀՀ դատախազության տեղը պետական մարմինների համակարգում: 2. ՀՀ դատախազության կազմակերպման և գործունեության սկզբունքները: 3. ՀՀ դատախազության մարմինների կառուցվածքը և կազմավորումը: 4. ՀՀ դատախազության գործունեության ուղղությունների ընդհանուր բնութագիրը:

**Հարցեր 1-4** – Անցկացվում է դասախոսություն քննարկման եղանակով:

**Հարցեր 1-4** - Ինքնուրույն աշխատանք - ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը և իրավական ակտերին:

**Հարցեր 3-4** - Սեմինար պարապմունք – իրավիճակների վերլուծություն, խնդրահարույց հարցերի քննարկում:

## ԹԵՄԱ 11

### ՀՀ արդարադատության համակարգի այլ մարմինները

(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)

1. Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը ՀՀ-ում: 2. ՀՀ ոստիկանությունը: 3. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը: 4. ՀՀ նոտարիատը: 5. Ղատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը:

**Հարցեր 1-5** – Անցկացվում է դասախոսություն քննարկման եղանակով:

**Հարցեր 1-5** - Ինքնուրույն աշխատանք - ուսանողները ծանոթանում են թեմային վերաբերող գրականությանը և իրավական ակտերին:

**Հարցեր 1, 2, 5** - Սեմինար պարապմունք – իրավիճակների վերլուծություն, խնդրահարույց հարցերի քննարկում:

### Եզրափակիչ քննության հարցաշար

1. «Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգը» դասընթացի աղբյուրները
2. Դատական իշխանության հասկացությունը և հատկանիշները
3. Դատական իշխանությունը դերը և նշանակությունը իշխանությունների սահմանադրական համակարգում
4. Դատարանը որպես դատական իշխանություն մարմին
5. Արդարադատության խորհրդի կարգավիճակը, կազմը և լիազորությունները
6. Դատական իշխանության ինքնակառավարման մարմինները
7. Դատական դեպարտամենտի իրավասությունները և կառուցվածքը
8. Դատավորի կարգավիճակի ընդհանուր բնութագիրը
9. Դատավորի թեկնածուին ներկայացվող պահանջները և դատավորի նշանակման ընթացակարգը
10. Դատավորի վարքագծի կանոնները
11. Դատավորի անկախության երաշխիքների հասկացությունը և նշանակությունը
12. Դատական համակարգի կազմավորումը և դատավորի գործունեությանը միջամտելու անթույլատրելիությունը որպես դատավորի անկախության երաշխիքներ
13. Դատավորի անփոփոխելիությունը և ապաքաղաքականացվածությունը որպես դատավորի անկախության երաշխիքներ
14. Դատավորի անձեռնմխելիությունը որպես դատավորի անկախության երաշխիքներ
15. Արդարադատության իրականացման օրենքով սահմանված դատավարական ձևը որպես դատավորի անկախության երաշխիքներ
16. Դատավորի գործունեության նյութական և սոցիալական երաշխիքները
17. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը և ընթացակարգը
18. Դատավորի լիազորությունների դադարեցման հիմքերը և ընթացակարգը
19. Արդարադատության հասկացությունը և բնութագրական հատկանիշները
20. Դատական իշխանության, արդարադատության և դատավարության հարաբերակցությունը
21. Արդարադատության իրականացման սկզբունքների հասկացությունը և հատկանիշները
22. Օրինականության սկզբունքը
23. Բոլորի հավասարությունը օրենքի և դատարանի առջև
24. Դատական պաշտպանության ապահովումը
25. Դատական քննության հրապարակայնությունը



26. Մրցակցությունը
27. Վարույթի ողջամիտ ժամկետը
28. Անմեղության կանխավարկածը
29. Իրավաբանական օգնության իրավունքի ապահովումը
30. Դատավարության լեզուն
31. Ոչ իրավաչափ վարքագծի արգելքը
32. Դատական համակարգի ձևավորման սկզբունքները
33. ՀՀ դատական համակարգի հասկացությունը և հատկանիշները
34. Ընդհանուր իրավասության դատարաններ
35. Մասնագիտացված դատարաններ
36. Վերաքննիչ դատարաններ
37. ՀՀ վճռաբեկ դատարանը
38. ՀՀ Սահմանադրական դատարանի տեղը դատական համակարգում
39. ՀՀ Սահմանադրական դատարանի կազմակերպման և գործունեության սկզբունքները
40. ՀՀ Սահմանադրական դատարանի կազմը, նրա անդամների կարգավիճակը և գործունեության կազմակերպումը
41. ՀՀ Սահմանադրական դատարանի լիազորությունները
42. Դիմումի քննության կարգը Սահմանադրական դատարանում
43. Փաստաբանության հասկացությունը, նշանակությունը և խնդիրները
44. Փաստաբանության կազմակերպման և գործունեության սկզբունքները
45. Փաստաբանների պալատը և դրա մարմինների իրավական վիճակը
46. Փաստաբանական գործունեության հասկացությունը, ուղղությունները և արտոնագրումը
47. Փաստաբանի իրավական վիճակը:
48. Հանրային պաշտպանի գրասենյակը:
49. ՀՀ դատախազության տեղը պետական մարմինների համակարգում
50. Օրինականությունը դատախազության գործունեության մեջ
51. Դատախազության մարմինների անկախությունը
52. Դատախազության մարմինների միասնականությունը
53. Դատախազության մարմինների համակարգը և կառուցվածքը
54. Դատախազության մարմինների կազմավորումը
55. ՀՀ դատախազության գործունեության ուղղությունները
56. Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը ՀՀ-ում
57. ՀՀ ոստիկանության համակարգը, խնդիրները և գործառույթները

- 58. ՀՀ ազգային անվտանգության մարմինների համակարգը և գործառույթները
- 59. Նոտարիատի դերը, նշանակությունը և խնդիրները
- 60. Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինները

«Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգը» դասընթացի համար առաջարկվող ընդհանուր գրականություն

### **Պարտադիր գրականություն**

- 1. ՀՀ Սահմանադրություն (ընդունված 1995թ.՝ 2005թ. փոփոխություններով)
- 2. ՀՀ դատական օրենսգիրք (ընդունված 2007թ. փետրվարի 21-ին՝ վերջին փոփոխություններով և լրացումներով),
- 3. Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգը /դասագիրք ԲՈՒՀ-ի համար/, Երևան, 2009թ.:

### **Լրացուցիչ գրականություն**

- 1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (ընդունված՝ 10.12.1948թ.),
- 2. Միջազգային դաշնագիր քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին (ընդունված՝ 16.12.1966թ.),
- 3. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա (ընդունված՝ 04.11.1950թ.),
- 4. Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքներ (ընդունված՝ 1985թ.),
- 5. Դատավորների կարգավիճակի մասին Եվրոպական խարտիա (ընդունված՝ 1998թ.),
- 6. Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքը (ընդունված 2006թ.՝ վերջին փոփոխություններով և լրացումներով),
- 7. Դատախազության մասին ՀՀ օրենքը (ընդունված 2007թ.՝ վերջին փոփոխություններով և լրացումներով), 2007թ.,
- 8. Փաստաբանության մասին ՀՀ օրենքը (ընդունված 2004թ.՝ վերջին փոփոխություններով և լրացումներով),
- 9. **Մ.Գ. Խաչատրյան, Դ.Մ. Խաչատրյան** Դատավորի կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, 2002թ.,
- 10. **Ա.Գ. Վաղարշյան**, Դատական համակարգի կազմավորման և գործունեության հիմունքների սահմանադրական զարգացումը Հայաստանում (1918-1995թթ.), /դասախոսություն/, Երևան, 1992թ.,
- 11. Դատավորի սեղանի գիրք /գործնական ձեռնարկ/, 2002թ.,
- 12. Марченко М. Н. Судебное правотворчество и судебское право. М. 2006,
- 13. Մանուկյան Գ. Երևան. Երևանի իրավաբանական համալսարանի տեղեկագրեր, 2003,
- 14. Մանուկյան Գ. Երևան. Երևանի իրավաբանական համալսարանի տեղեկագրեր, 1999.
- 15. Մանուկյան Գ. Երևան. Երևանի իրավաբանական համալսարանի տեղեկագրեր, 1991.